ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ԿԻՐԻԼ Ա ՊԱՏՐԻԱՐՔԻ ԱՅՑԸ ՀԱՅԱՍՏԱՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրաւերով մարտի 16-ին պաշտօնական այցով Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբություն Կիրիլ Առաջինը: Նորին Սրբության օդանավը «Զվարթնոց» միջազգային օդանավակայանում վայրէջք կատարեց ժամը 15-ին: Այնտեղ Ռուսաց Պատրիարքին դիմավորեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվիրակությունը՝ գլխավորությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Կիրիլ Պատրիարքին դիմավորելու էին եկել նաեւ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ինչպես նաեւ ՀՀ հավատարմագրված ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Վ. Կովալենկոն, Ուկրաինայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ա. Բոժկոն, Բելառուսի արտակարգ եւ լիազոր դեսպան Ս. Սուխորենկոն, Թուրքմենստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ծ. Ջումաեւը, Ղազախստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ա. Բոգժիգիտովը:

Հովվապետների եղբայրական ողջագուրումից հետո Պատրիարքին ավանդական աղ ու հաց մատուցեցին Հայորդյաց տան սաները: Ապա երկու եկեղեցապետներն անցնելով պատվո պահակախմբի առջեւով՝ մոտեցան դիմավորող պատվիրակությանը: Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանը Ռուս Եկեղեցու պետին ներկայացրեց դիմավորող եկեղեցականներին եւ դեսպաններին:

Օդանավակայանում Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարքը պատասխանեցին լրագրողների հարցերին:

Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարքին ուղեկցում են պատրիարքարանի արտաքին հարաբերությունների բաժնի պատասխանատու Վոլոկոլամսկի միտրոպոլիտ Իլարիոնը, Սերգիեւ Պասադի արքեպիսկոպոս Թեոգնոստը, Սոլնեչնոգորսկի եպիսկոպոս Սերգիյը, Տ. Ֆիլիպ վարդապետ Ռյաբիխը, Տ. Ալեքսանդր քահանա Վասյուտինը, Վլադիմիր ավագ սարկավագ Նազարկինը, Անտոնի սարկավագ Սեւրյուկը, Մոսկվայի պատրիարքարանի սինոդային տեղեկատվական բաժնի ղեկավար Վլադիմիր Լեգոյդան, Միխայիլ Գուկսովը:

Օդանավակայանից երկու Հայրապետներն իրենց շքախմբերի ուղեկցությամբ մեկնեցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբություն Կիրիլ Առաջինին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Ս. Տրդատի կամարի մոտ, դիմավորեց Մայր Աթոռի միաբաններից, թեմական առաջնորդներից, ռուս հոգեւորականներից եւ ճեմարանականներից կազմված խաչվառազարդ թափորը: Խունկի օրհնությունից հետո Մայր Տաճարի զանգերի ղողանջների ներքո երկու հովվապետները, օրհնելով խուռներամ ժողովրդին, «Հրաշափառ» շարականի հանդիսավոր երգեցողությամբ առաջնորդվեցին Միածնաէջ Մայր Տաճար:

Իջման Սուրբ Սեղանի առջեւ երկու գահակալները խոնարհվեցին՝ համբուրելով Ասպվածընկալ Ս. խաչը եւ Ավետարանը, որից հետո սկսվեց բարիգալստյան արարողությունը:

Հայաստան Կիրիլ Պատրիարքի այցի առիթով «Լերինք ամենայն, այսօր ցնծացէք» շա-

բականի երգեցողությամբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը տաճարի ավանդատնից բերեց Ս. Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի Ս. Աջը, որը Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը տեղադրեց հատուկ պատվանդանի վրա՝ ի խոնարհումն երկու հովվապետների, եկեղեցականաց դասի եւ հավատացյալ ժողովրդի: Ս. Գրիգոր Լուսավորչին նվիրված շարական էին երգում նաեւ ռուս եկեղեցականները:

Ապա խոնարհումից հետո իրենց ողջույնի խոսքն ու օրհնությունը ներկաներին փոխանցեցին Ամենայն Հայոց Կաթողիկոսը ու Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքը:

Ն.Ս.Օ.Տ.Տ ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ԿԻՐԻԼ Ա ՊԱՏՐԻԱՐՔԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 16 մարտ 2010 թ.)

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր ի Քրիստոս,

Անհուն ուրախության խորը զգացումով քրիստոսահիմն եւ լուսավորչահաստատ Մայր Տաճարում ողջունում ենք Ձեր ուրախառիթ ժամանումը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Ձեր այցելությունը սկսվում է աղոթքով միաձնաէջ այս տաճարում: Միասնական մեր աղոթքը գրավականը եւ վկայությունն է Քրիստոսի Սուրբ Եկեղեցու ճշմարիտ միասնության՝ մեկ Աստծո, մեկ Ավետարանի եւ մեկ Սուրբ Եկեղեցու՝ իբրեւ Քրիստոսի մեկ մարմնի ճշմարիտ եւ անփոփոխելի իրականության: Միասնական մեր աղոթքը ոգին է քրիստոնեական եղբայրության, երբ մենք, որպես մեկ երկնավոր Հոր հարազատ զավակներ, միաբերան դիմում ենք մեր Տեր Աստծուն՝ «Հայր մեր, որ երկնքում ես» Տերունական աղոթքով: Եւ այսօր ուրախությամբ կարող ենք Սուրբ Պողոս Առաքյալի հետ երկրորդել, որ «Մենք, եղբայրնե՛ր, խոստման որդիներ ենք, Իսահակի նման» (Գաղատ. Դ 28):

Հայ Առաքելական Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու դարավոր հարաբերությունները հատկանշում է քրիստոնեական եղբայրության եւ գործակցության ոգին: Ձեր այցելությունը եւս մեկ աներկբա հավաստիքն է աստվածահաճո այս իրողության: Եղբայրական փոխհարաբերությունների զորացումը հրամայական անհրաժեշտություն է այս օրերին, մանավանդ երբ մեր երկու երկրները՝ Ռուսաստանի Դաշնությունն ու Հայաստանի Հանրապետությունը եւ մեր երկու Եկեղեցիները՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցին եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, թոթափած խորհրդային աթեիզմի լուծը, կանգնած են աշխարհայնացման նոր մարտահրավերների եւ մտահոգիչ հիմնախնդիրների առաջ: Մեր ժողովուրդների երկուստեք հարգանքի եւ եղբայրական սիրո, մեր եկեղեցիների ու նաեւ՝ պետությունների համագործակցության նոր վկայությունները պիտի լինեն Հայաստանի մայրաքաղաք Երեւանում ռուսական նոր եկեղեցու եւ Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում նոր հայկական եկեղեցու կառուցումը:

Զե՛ր Սրբություն, այս օրերին մեր Եկեղեցին եւ մեր ժողովուրդը պիտի վայելեն Ձեր սերն ու օրհնությունը, աղոթքն ու գորակցությունը՝ փոխադարձաբար մատուցելով Ձեզ եւ Ձեր անձի միջոցով՝ հայ ժողովրդի անվերապահ սերը եւ երախտագիտության ջերմ զգացումները հանդեպ Ռուս Եկեղեցին, ռուս մեծ ժողովուրդը եւ Ռուսաստանի պետությունը, որ դարեր շարունակ սիրով ու եղբայրաբար ընդունել եւ շարունակում են հյուրընկալել եւ եղբայրական հոգատարություն ցուցաբերել Ռուսաստանի Դաշնության սահմաններում բնակություն հաստատած բազմահազար հայորդիների:

Այսօր առիթն օգտագործելով որպես Հայրապետ Ամենայն Հայոց՝ կրկին ու կրկին բերում ենք մեր երախտագիտության եւ շնորհակալության ջերմ խոսքերը Ռուսաստանի հայության նկատմամբ այն բարյացկամ վերաբերմունքի համար, որ տեսել ենք մեր բազմաթիվ այցելությունների ժամանակ, եւ որի շնորհիվ այսօր Ռուսաստանում ծաղկում է ապրում հայ գաղութը՝ Հայաստանից դուրս հաստատված ամենամեծ հայ համայնքը, որի անդամները, իբրեւ օրինավոր եւ օրինապահ քաղաքացիներ Ռուսաստանի Դաշնության, բարի գործերով մասնակից են իրենց ապաստան տված օրինյալ երկրի վերազարթոնքին:

Զե՛ր Սրբություն, հանուն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գերագույն հոգեւոր խորհրդի, եպիսկոպոսաց դասի, հոգեւորականների, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության ու պաշտոնեության եւ հավատացյալ ողջ ժողովրդի՝ Ձեզ եւ Ձեր պատվիրակության բարձրապատիվ անդամներին մաղթում ենք բարի գալուստ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Աղոթում ենք, որ Աստված Ձեր այցելության օրհնությամբ առավել ամրացնի եւ առավել զորացնի մեր երկու Եկեղեցիների եւ երկու ժողովուրդների անեղծ եղբայրական սերն ու ջերմությունը՝ ի վկայություն Հիսուս Քրիստոսի խոսքի. «Եթէ դուք միմեանց սիրէք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աշակերտներն էք» (Յովհ. ԺԳ. 35):

Թող Բարին Աստված Իր Սուրբ Աջի Ամենախնամ հովանու ներքո պահի ու պահպանի Ռուս Ուղղափառ եւ Հայ Առաքելական մեր Եկեղեցիները, Ռուսաստանի Դաշնությունը եւ Հայաստանի Հանրապետությունը, Իր օրհնությամբ առավել արդյունավորի փոխհարաբերություններն ու համագործակցությունը մեր եկեղեցիների ու պետությունների՝ Սուրբ Հոգու երկնառաք պարգեւներով առատապես շնորհազարդելով բարեպաշտ գավակներին հայ եւ ռուս եղբայր ժողովուրդների. «Եւ խաղաղութեան Աստուածն ինքը թող սրբացնի մեր եղբայրութեան ոգին ամբողջապէս եւ անարատ պահի մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալուստը» (հմմտ.՝ Ա Թեսաղ. Ե 23):

Այս հայցով ու աղոթքով, հոգու բերկրանքով ու ջերմությամբ բարի գալուստ ենք մաղթում ու ողջագուրում Ձեզ, սիրելի շնորհազարդ եղբայր Կիրիլ Ա Պատրիարք Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ: Թող Տերը քաջառողջ կյանք եւ գահակալության երկար տարիներ պարգեւի Ձեզ՝ առաջնորդելու բարեպաշտ Ձեր հոտը դեպի աստվածօրինյալ եւ հավատքով ոռոգյալ բարեխնամ ափեր:

* * *

Իր խոսքում Կիրիլ Պատրիարքը շնորհակալություն հայտնեց եղբայրական ջերմ ընդունելության համար: Անդրադառնալով քրիստոնեական հավատքի կանոնությանը հայ ժողովրդի կյանքում՝ Կիրիլ Պատրիարքը հիշատակեց Հայ Եկեղեցու մեծագույն սրբերին՝ Ս. Գրիգոր Լուսավորչին ու Հռիփսիմյանց կույսերին, որոնք հավատքի սերմեր ցանեցին Հայաստանի օրհնյալ հողում:

Արարողության ավարտին Հայրապետները Ս. Գրիգոր Լուսավորչի Աջով օրհնություն բաշխեցին հավատացյալ ժողովրդին եւ ապա եկեղեցական թափորով ուղղվեցին դեպի Վեհարան, որտեղ հանդիսությունների սրահում կատարվեց Էջմիածին եւ Սերգիեւ Պասադ քաղաքների միջեւ բարեկամության եւ համագործակցության հուշակագրի ստորագրման արարողությունը ներկայությամբ երկու Եկեղեցիների պետերի:

Նախ Ամենայն Հայոց Հայրապետը Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարքին ներկայացրեց Հայ Եկեղեցու թեմական առաջնորդներին, ԳՀԽ անդամներին եւ Հայաստանում հավատարմագրված դեսպաններին: Արարողության կարեւորությանն անդրադարձավ Արցախի հայոց թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ապա հրավիրեց Էջմիածնի եւ Սերգիեւ Պասադի քաղաքապետներին ստորագրելու հուշակագիրը: Այնուհետեւ իրենց սրտի խոսքն ասացին քաղաքապետները՝ երախտագիտություն հայտնելով երկու Հայրապետներին իրենց ներկայության եւ կարեւոր այս ձեռնարկին տված օրհնության համար: «Ստորագրված փաստաթուղթը լրացուցիչ ազդակ է երկու պետությունների եւ ժողովուրդների պատմության մեջ քննություն բռնած Մեծ բարեկամության: Համոզված եմ, որ Սերգիեւ Պասադի քաղաքային իշխանությունների հետ մեր փոխշահավետ համագործակցությամբ կնպաստենք երկու քաղաքների բարեկամության հետագա զարգացմանը», - ասաց Էջմիածնի քաղաքապետ Կարեն Գրիգորյանը: Սերգիեւ Պասադի քաղաքագլուխ Ն. Վ. Մասլովը եւս կարեւորեց հարաբերությունների ամրապնդումը երկու քաղաքների միջեւ:

Այնուհետեւ հովվապետները, ուղեկցությամբ իրենց պատվիրակությունների, այցելեցին Օշականի մերձակայքում գտնվող 1828 թ. ռուս-պարսկական պատերազմի ընթացքում զոհված ռուս զինվորների հուշակոթող: Ծաղկեպսակներ զետեղելուց հետո Վեհափառ Հայրապետը եւ Ռուսիոյ Պատրիարքը աղոթք վերառաքեցին առ Աստված՝ զոհված զինվորների հոգու հանգստության համար:

Մարտի 17-ի առավոտյան Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբություն Կիրիլ Առաջինը երկու Եկեղեցիների հոգեւոր դասի ուղեկցությամբ այցելեցին Ծիծեռնակաբերդի հուշահամալիր՝ հարգանքի տուրք մատուցելու բյուրավոր հայ նահատակների անմահ հիշատակին:

Հուշահամալիրում երկու հովվապետները ծաղկեպսակներ զետեղեցին, ապա անմար կրակի մոտ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն, որից հետո Կիրիլ Պատրիարքն աղոթեց Հայոց ցեղասպանության զոհերի հոգիների հանգստության համար:

Աղոթքից հետո Հայրապետներն այցելեցին Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարան, ուր թանգարանի տնօրեն Հայկ Դեմոյանի ուղեկցությամբ շրջեցին ցուցաս-

բահներում: Այնուհետև Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարքը գրառում կատարեց հյուրերի հուշամատյանում:

Վերջում Կիրիլ Պատրիարքը ծառատունկ կատարեց Հիշողության պուրակում:

Այնուհետև Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբություն Կիրիլ Առաջինը այցելեցին Քանաքեռի Սուրբ Աստվածածնի ռուսական եկեղեցի:

Կիրիլ Պատրիարքի կարճատեւ աղոթքից հետո երկու հովվապետները իրենց ողջույնի խոսքն ուղղեցին Ռուս եկեղեցու համայնքի ներկայացուցիչներին՝ իրենց օրհնությունը բաշխելով նրանց:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՔԱՆԱՔԵՌԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(17 մարտի 2010 թ.)

Զե՛ր Սրբություն, սիրելյալ եղբայր ի Քրիստոս,

Մեծարգո՛ւ պրն դեսպան,

Սիրելի՛ հավատացյալ ժողովուրդ,

Գոհություն եւ փառք Երկնավորին, որ ուրախալի առիթ ընծայեց Մեզ սիրելյալ Մեր եղբոր՝ Մոսկվայի եւ համայն Ռուսիոյ Կիրիլ Ա Պատրիարքի ընկերակցությամբ այցելելու Քանաքեռի Սուրբ Աստվածածին եկեղեցի՝ աղոթելու ձեզ հետ եւ բերելու ձեզ Հայրական մեր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Այս պահին Մենք մտաբերում ենք այն օրը, երբ 14 տարի առաջ այս նույն սրբավայրում եղբայրաբար իրենց գոհաբանական աղոթքն էին վերառաքում առ Բարձրյալն Աստված մեր նախորդ երջանկահիշատակ Հայրապետները՝ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մոսկվայի եւ համայն Ռուսիոյ Ալեքսի Բ Պատրիարքը:

Մենք անհուն ցնծություն ենք ապրում՝ տեսնելով, թե ինչպես են Հայաստանում բնակվող մեր եղբայր ռուս ժողովրդի զավակները քրիստոնեական սիրով եւ հավատի ջերմ զգացումներով, համախմբված Եկեղեցու շուրջ՝ կազմակերպում համայնքային իրենց կյանքը:

Ի դարասկզբին Քանաքեռի բարձունքին կառուցված այս աղոթաբույր եկեղեցին տարիներ շարունակ հոգեւոր սնունդ է մատակարարում ինչպես ռուս հավատացյալց, այնպես էլ Ուղղափառ մյուս Եկեղեցիների զավակներին: Խորհրդային ասպվածամերժության տարիներին հալածանքներից անմասն չմնաց նաեւ Աստուծո այս տաճարը եւ իր դռները վերստին բացեց հավատացյալց առջեւ միայն 1991 թվականից հետո: Մեր երկու եկեղեցիները եղբայրաբար ճաշակեցին խորհրդային իշխանությունների դառն հալածանքները, բայց եւ կարողացան հավատարիմ մնալով Երկնավոր Վարդապետի անվանը եւ լույս հավատքին՝ ըստ

արժանվույն դիմակայել հալածանքներին եւ, ի վերջո, դուրս գալ հաղթանակած. «Եւ այս է այն յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հաւատը» (Ա Յովհ. Ե 4):

Փառք Երկնավորին, որ այսօր մեր երկու ժողովուրդները մեր Սուրբ Եկեղեցիների հովանու ներքո այլեւս ազատորեն կազմակերպում են իրենց եկեղեցական եւ համայնքային կյանքը, վերականգնում խոնարհյալ աղոթատները եւ աղոթքով լցնում եկեղեցիները: Քրիստոնեական հավատի վերազարթոնքը նոր շունչ է բերում մեր ժողովուրդներին եւ ներգործում մեր կյանքից ներս:

Ձերդ Սրբություն, այս օրհնաբեր այցելությունը Մեզ համար մի գեղեցիկ առիթ է Մեր գնահատանքը հայտնելու Հայաստանում ապրող մեր եղբայր ռուս ժողովրդի զավակներին, որոնք արժանավոր քաղաքացիներն են Հայաստանի Հանրապետության:

Սիրելինե՛ր, հասարակական մեր կյանքի տարբեր ոլորտներում դուք բերում եք ձեր կարեւոր եւ արդյունավոր ներդրումը, որը մեծապես նպաստում է մեր Հայրենիքի զարգացմանն ու առաջընթացին: Մեր ժողովրդի հետ միասին կիսում եք մեր ուրախությունն ու դառնությունը՝ Հայաստանը նկատելով ձեր երկրորդ հայրենիքը, ինչպես մեր զավակները՝ ձեր եղբայրներն ու քույրերը, որ ապրում են Ռուսաց օրհնյալ երկրում:

Վստահ ենք, որ ձեր Հովվապետի այցելությունը մեծապես պիտի ոգեւորի եւ գոտեպնդի ձեզ, զորացնի ձեզ՝ ձեր հավատքի մեջ, եւ մղի նորանոր բարեարոյություն իրագործումների՝ հանուն մեր երկու ժողովուրդների բազմադարյան եղբայրության ամրապնդման եւ մեր Եկեղեցիների հարաբերությունների առավել սերտացման:

Աղոթքով առ Բարձրյալն Աստված՝ հայցում ենք Երկնավորից, որ Իր Ամենախնամ Սուրբ Աջը մշտապես հովանի եւ պահապան դարձնի ձեզ՝ պարգեւելով քաջառողջ եւ երջանիկ կյանքի երկար տարիներ եւ ամենայն բարիք:

Առ Աստված մաղթում ենք երկար տարիների արդյունավոր գահակալություն եւ արեւշատություն հոգեւոր մեր եղբորը՝ Կիրիլ Պատրիարքին, հայցելով Բարձրյալից, որպեսզի Իր Բարի հայացքի ներքո պահի ու պահպանի Ռուսաստանի Դաշնությունը եւ Հայաստանի Հանրապետությունը եւ օրհնի հավատակից մեր ժողովուրդների ազնիվ ջանքերը՝ առավել ամրացնելու մեր դարավոր բարեկամությունը եւ զորացնելու ազգային-եկեղեցական մեր կյանքը:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

* * *

Այցի առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսը ռուսական եկեղեցուն նվիրեց սրբապատկեր:

Ռուսական Եկեղեցուց երկու հովվապետները հոգեւոր դասի ուղեկցությամբ այցելեցին նաեւ Քանաքեռում գտնվող ՌԴ պաշտպանության նախարարության թիվ 21 ռուսական դպրոց, հանդիպեցին տնօրինության հետ, ծանոթացան դպրոցի պայմաններին: Այնուհետեւ տեղի ունեցավ հանդիպում աշակերտների հետ, որի ընթացքում Հայրապետներն իրենց

օրհնությունը եւ հայրական խրատները բերեցին պատանիներին՝ կարեւորելով քրիստոնեական արժեքներով մարդկային նկարագրի կերտումը եւ պատգամելով հետեւողական լինել ուսման մեջ:

Նույն օրվա երեկոյան Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցում կատարվեց Գոհաբանական աղոթք՝ մասնակցությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբություն Կիրիլ Առաջինի եւ ներկայությամբ Հայաստանի Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանի: Արարողությանը ներկա էին նաեւ հայոց պետական ավագանին, ՀՀ հավատարմագրված օտարերկրյա դիվանագետները, գիտության եւ մշակույթի գործիչներ, բուհերի ուսանողներ եւ բարեպաշտ հայորդիներ:

Հայրապետներին տաճարի զանգակատան մոտ դիմավորեցին խաչերով եւ խաչվառներով զարդարյալ թափորը եւ հավատացյալ հայորդիների բազմությունը: «Հրաշափառի» երգեցողության ներքո երկու Հայրապետները եւ ՀՀ Նախագահը մուտք գործեցին եկեղեցի: Համբուրելով ամպհովանու ներքո ամփոփված Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները՝ նրանք առաջնորդվեցին դեպի եկեղեցու ատյան, ուր կատարվեց արարողությունը:

Աղոթքի ավարտին երկու Եկեղեցիների պետերը փոխանակեցին խոսքեր՝ իրենց օրհնությունը բերելով ներկա ժողովրդին:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՅՑԵԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՂՈԹՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԵՐԵՒԱՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(17 մարտի 2010 թ.)

Զե՛ռդ Սրբություն, սիրելյալ եղբայր ի Քրիստոս,

Այսօր հոգեւոր բերկրանքով համախմբվել ենք միասնական աղոթքի հայոց լուսավորիչ եւ առաջին Հայրապետ Սուրբ Գրիգորի անունը կրող Երեւանի Մայր եկեղեցում՝ մեզ աղոթակից ունենալով Հայաստանի Հանրապետության մեծահարգ Նախագահ տիար Սերժ Սարգսյանին, պետական բարձրաստիճան այրերի, մեր Սուրբ Եկեղեցիների հոգեւորականաց եւ հավատավոր մեր զավակներին: Մեծ պահքի աղոթական խոկման այս շրջանում առանձնակի խորհուրդ ունի դեպի հարուցյալ կյանքի Լույսը պարզված մեր միասնական աղոթքը եւ ջերմեռանդ հայցը՝ մեր Սուրբ Եկեղեցիների անսասանության, հավատակից մեր ժողովուրդների անխախտ բարեկամության եւ աշխարհի խաղաղության համար: Արդարեւ, Աստծուն առավել հաճելի է մեր միասնական աղոթքը՝ իբրեւ վկայություն Իրեն հուսացյալների եղբայրական սիրո եւ համախոհ գործակցության՝ հանուն բարու, արդարության եւ ճշմարտության. «Զի որք սիրեն զԱստուած՝ յամենայնի գործակից լինին ի բարիս» (Հռոմ. Ը 28),- ասում է Պողոս առաքյալը:

Մեր աղոթքին այսօր այս սուրբ եկեղեցու կամարների ներքո բարեխոս ու-

ևևնք հավատի մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչին, ում վկայությամբ, աղոթքով ու ջանքով հայոց անդաստանում բարձրացան Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների սփռած հավատքի հունդերը: Աստծո օրհնությամբ ռուսական լայնարձակ աշխարհում առատորեն պտղաբերեց Սուրբ Անդրեաս առաքյալի քարոզությունը: Լուսավորիչ առաքյալների եւ առաքելապատիվ Սուրբ Գրիգորի վկայությունը եւ աղոթքը դարերի մեջ ամրապնդել ու զորացրել են ի Քրիստոս սիրո վեմին հաստատված եղբայրության մեր ուղին:

Հավատակից մեր ժողովուրդների պատմությունը բազում էջեր ունի համատեղ արարումի եւ համատեղ պայքարի, որոնք լի են արիության ու զոհողությունների օրինակներով, նվիրումի եւ մեծագործ ձեռքբերումների պարծանքով: Իր կյանքի դժվարին ժամանակներում, երբ հայ ժողովուրդը հայացքը ուղղեց դեպի Ռուսաստան, միշտ գտավ անկեղծ աջակցություն, իսկ հանձին հայության Ռուսաստանը միշտ ունեցավ հավատարիմ դաշնակցի: Մեր հոգիներին այսօր բերկրանք ու խրախույս են բերում մեր պետությունների դաշնակցային հարաբերությունները եւ օրեցօր զորացող արգասաբեր համագործակցությունը՝ հնարավոր դարձնելով, որ խաղաղ ու ազատ պայմաններում զորանան մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերությունները: Մեր ժողովուրդների եւ Եկեղեցիների բարեկամության հարուստ ավանդները, չնայած պատմական տարբեր ընթացքների եւ ավանդույթների, վարդապետական տարբերությունների, մշտապես կյանքի են կոչվել ձգտումով միասնական դարձնելու Աստծո փառքի համար Քրիստոսի սիրուց բխող մեր քայլերը, որոնք բազում քաղցրահամ պտուղներ են բերել երկուստեք մեր պետական ու հասարակական կյանքին, զորություն ու պայծառություն՝ մեր Եկեղեցիներին:

Այսօր եւս մեր ժամանակների քաղաքական, տնտեսական, մշակութային եւ հասարակական արագընթաց զարգացումների մեջ, երբ աշխարհայնացման ընթացքներում անտեսվում է հոգեւորը եւ մարդկային հարաբերություններում՝ ասպվածաղիր օրենքների ու պատվիրանների կարեւորությունը, երբ վեր են հառնում բազմապիսի խնդիրներ եւ արդիականությունից բխող մարտահրավերներ, մենք, որպես Քրիստոսի Սուրբ Եկեղեցու անդամներ, պիտի առավել ջանադիր գործակցենք՝ հանուն ավետարանական սրբազան արժեքներով մարդկային կյանքի խմորման, հանուն խաղաղ աշխարհի, պաշտպանված իրավունքների, բարօր ու երջանիկ կյանքի: Պիտի ամրանանք եղբայրական սիրո եւ համագործակցության ուղիներում՝ «ապրելու համար Տիրոջն արժանի եւ ամեն ինչում Նրան հաճելի ձեւով, բոլոր բարի գործերում պտղաբեր լինելու եւ Աստծու գիտությամբ աճելու համար՝ զօրացած Նրա ամբողջ ուժով, Նրա փառքի զօրութեամբ» (Կող. Ա 10-11):

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, Դուք հովվապետական Ձեր առաքելությունը սկսել եք մեծ հաջողություններով Ռուս Ուղղափառ Եկեղեցու առավել զորացման ու պայծառության, մարդկանց սրտերում հոգեւոր սրբարար արժեքների ամրապնդման, նոր սերնդի քրիստոնեական դաստիարակության, ինչպես նաեւ՝ այսօր մարդկային կյանքը հուզող մարտահրավերների հաղթահարման համար

հոգեւոր ուղեկիցների մշակման, միջկրոնական հանդուրժողականության զորացման, միջեկեղեցական հարաբերությունների արգասավորման, մարդու եւ ժողովուրդների իրավունքների պաշտպանության ոլորտներում, հանգամանք, որ սրտամոտ եւ մեծապես ողջունելի է նաեւ Հայ Եկեղեցու եւ համայն հայ ժողովրդի համար: Այսօր Մեզ եռախտագիտությամբ ենք անդրադառնում Ռուս Ուղղափառ Եկեղեցու՝ մեր ժողովրդի հանդեպ ցուցաբերած եղբայրական գորակցությանը, Հայոց ցեղասպանության դատապարտման, ինչպես նաեւ Ադրբեջանի եւ Հայաստանի հոգեւոր առաջնորդների հանդիպումների կազմակերպմամբ Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի արդար ու խաղաղ լուծման գործում ներդրած մեծ ջանքերին:

Որպես եղբայրական Մեր սիրո եւ Ձերդ Սրբության հանդեպ աշխարհասփյուռ հայ ժողովրդի խորին հարգանքի ու գնահատանքի արտահայտություն, ցանկանում ենք Ձեր՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո շնորհազարդ Պատրիարքիդ կուրծքը զարդարել Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բարձրագույն պարգեւով՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով՝ մաղթելով, որ Աստված երկար տարիների հովվապետական անսասան գավազան պարգեւի Ձերդ Սրբությանը՝ իրագործելու Ձեր բոլոր իղձերն ու փեսիլքները՝ ի պայծառություն Ռուս Ուղղափառ Եկեղեցու եւ ի բարօրություն Ձեր հավատավոր զավակների:

Այլեւ խնդրամատույց ենք առ Տերը, որ Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահպանի մեր երկու եկեղեցիները եւ մեր երկրները անխախտ բարեկամության մեջ, քանզի «Եղբօրից օգնութիւն ապացած եղբայրը նման է ամուր քաղաքի, նա հզօր ու բարձր է ինչպէս հաստատուն թագաւորութիւնը» (Առակ. ԺԸ 19):

Թող Սերն Աստծո, խաղաղությունը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի եւ շնորհները ու առաջնորդությունը Սուրբ Հոգու լինեն մեզ հետ եւ բոլորի՝ այսօր եւ միշտ եւ հավիտյանս. Ամեն:

* * *

Հավարտ իր խոսքի Ամենայն Հայոց Հայրապետը Գիրիլ Պատրիարքի կուրծքը զարդարեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատվո բարձրագույն պարգեւով՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշանով եւ Նորին Սրբությանն ընծայեց պատրիարքական պանակեներ եւ լանջախաչ:

Ապա իր երախտիքի խոսքն ասաց Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքը՝ անդրադառնալով հայ-ռուսական դարավոր բարեկամությանը եւ հարաբերություններին:

ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԻՐԻԼ ԱՌԱՔԻՆԻ ԽՈՍՔԸ ԵՐԵՒԱՆԻ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Թույլ տվեք իմ խորին երախտագիտությունը հայտնել Հայ Առաքելական Եկեղեցու բարձրագույն պարգեւ՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան Ինձ հանձնելու համար: Այն ստանալով Ձերդ Սրբության ձեռքից՝ ընդունում եմ իբրեւ բա-

ռեպաշտ հայ ժողովրդի եղբայրական սիրո նշան հավատավոր ռուս ժողովրդի հանդեպ:

Հայ Եկեղեցին աշխարհի հնագույն եկեղեցիներից է: Պատմական Հայաստանի տարածքի մասին մենք իմանում ենք Սուրբ Գրքի առաջին էջերից. «Արարատի երկիրը» մի քանի անգամ հիշատակվում է Հին Կտակարանում: Ինչպես վկայում է Ծննդոց Գիրքը, «Յոթներորդ ամսի տասնյոթին տապանը նստեց Արարատ լեռան վրա» (Ծնն. Ը 4): Այսպիսով՝ այս հողը սերտորեն կապված է մարդկության փրկագործության տնօրինության հետ: Ավանդության համաձայն՝ Ավետարանի քարոզությունը Հայաստանում հասնում է մինչեւ Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալները: Նրանք ոչ միայն խոսքերով քարոզեցին Քրիստոս, այլեւ վկայեցին Նրան իրենց մարտիրոսական մահվամբ:

Բոլորին է հայտնի, որ Հայաստանն է առաջին երկիրը, որ ընդունել է քրիստոնեությունը իբրեւ պետական կրոն: Երբ քրիստոնյաները դեռեւս դաժան հալածանքների էին ենթարկվում Հռոմեական կայսրության մեջ, հայոց Տրդատ թագավորը ոչ միայն թույլատրեց Քրիստոսի Ավետարանի քարոզությունը, այլ նաեւ ինքը մկրտվեց եւ քրիստոնեություն ընդունեց իր երկրի հետ: Իսկ հայ ժողովրդի նշանավոր գավակ Մեսրոպ Մաշտոց վարդապետի կողմից այբուբենի ստեղծումից հետո, ինչպես վերջինիս աշակերտ Կորյունն է ասել, «Ասված խոսեց հայերեն»:

Անկարելի է քրիստոնեության պատմությունը Հայաստանում պատկերացնել առանց Սուրբ Գրիգոր Լուսավորչի անվան: Այս հոյակերտ տաճարը, որ կառուցվել է 2001 թ. Հայոց դարձի 1700-ամյակի կապակցությամբ, օծված է հանուն Հայաստանի մեծ լուսավորչի: Հույժ խորհրդանշական է, որ Կարմիր հրապարակում գտնվող Սուրբ Վասիլի Երանելու տաճարի խորաններից մեկը օծված է առաքելապատիվ Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունով:

Հայոց պատմությունն ունեցել է ոչ միայն ծաղկման շրջաններ: Շեր երկիրն անցել է նաեւ ծանր փորձությունների միջով: Դարերով գրկված լինելով սեփական պետականությունից եւ գտնվելով երկու հզորագույն կայսրությունների գերիշխանության ներքո՝ հայերը ենթարկվել են ճնշումների եւ հալածանքների: Այդ ժամանակ Եկեղեցին միակ առանցքն էր, որի շուրջ համախմբվում էր հայ ժողովուրդը: Եկեղեցին էր հայ ժողովրդի շահերը ներկայացնում պարսից շահերի եւ օսմանյան սուլթանների առջեւ:

Կովկասում ռուսների հայտնվելը փոփոխությունների մեծ հույսեր ներշնչեց: Դրա համար էլ հայերը ռուս զինվորներին դիմավորեցին իբրեւ ազատարարների եւ հավատակից եղբայրների: Այդ մասին վկայում են Կովկասում մարտնչած ռուս սպաների օրագրերը, ինչպես նաեւ սբանչելի էջերը Պուշկինի, Լերմոնտովի, Գրիբոեդովի ստեղծագործություններից: Հայ Եկեղեցու հովվապետների օրհնությամբ եւ օժանդակությամբ շատ հայորդիներ իբրեւ կամավորներ զինվորագրվում էին ռուսական զորքերում: Էջմիածնի պաշտպանության համար մղված մարտերում զոհված ռուս զինվորների հուշակոթողը Օշականում, Պատ-

վո Բարձունքը Գյումրիում եւ այլ հուշակոթողներ ձեր երկրում վկայում են ռուս ուղղափառ եղբայրների հանդեպ հայ ժողովրդի երախտագիտության մասին:

Կովկասյան արշավանքների, ապա ռուս-պարսկական եւ ռուս-թուրքական պատերազմների արդյունքում Արեւելյան Հայաստանը հայտնվեց Ռուսական կայրության կազմում: «Ռուսահայաստանի» հանդես գալը ելք էր հայ ժողովրդի համար պատմական մեկուսացումից: 11-րդ դարից հետո արեւելահայերին առաջին անգամ հնարավորություն ընձեռվեց լիաթոր շնչել եւ ազատորեն դավանել իր հավատը քրիստոնյա տերության մեջ:

1917 թ. հեղափոխությունից հետո հայ եւ ռուս ժողովուրդները կանգնեցին նոր փորձությունների առջեւ: Խորհրդային պատմության տասնամյակների ընթացքում Հայ եւ Ռուս եկեղեցիները կիսեցին դառն ճակատագիրը անաստված իշխանության կողմից իրականացվող հալածանքների: Մենք կրեցինք եւ սարսափելի հալածանքները հոգեւորականության եւ հավատացյալների նկատմամբ, եւ եկեղեցիների պղծումը, եւ այլ հետապնդումներ ու նվաստացումներ: Սակայն Աստծո զորությամբ մեր Եկեղեցիները դիմակայեցին:

Պատմական նոր պայմաններում Հայաստանի ժողովուրդն անկախություն ձեռք բերեց: Ի դարի 90-ական թթ. մեր ժողովուրդները միասին ապրեցին տնտեսական եւ քաղաքական անկայունության շրջան: Աստծո ողորմածությամբ միասին լինելով՝ նրանք կարողացան դուրս գալ 1990-ական թթ. ճգնաժամից: 2001 թ. ամբողջ քրիստոնյա աշխարհը հանդիսավորությամբ նշեց Հայոց դարձի 1700-ամյակը: Նոր հազարամյակի սկիզբը բոլոր քրիստոնյաների համար նշանավորվեց այդքան ուրախալի իրադարձության տոնախմբությամբ: Այդ ժամանակ այս հոյակերտ տաճարի կամարների ներքո այլ Եկեղեցիների պետերի հետ ներկա էր նաեւ Մեր երջանկահիշատակ նախորդը՝ Ալեքսի Բ Պատրիարքը:

Վաղ քրիստոնեական ժամանակներից հայ ժողովուրդը պահպանվել ու փրկվել է շնորհիվ Քրիստոսի նկատմամբ իր հավատարմության: Յուրաքանչյուրը, ով ծանոթ է հայոց պատմությանը, կհամաձայնի այս հաստատման հետ: Նույնը կարող եմ ասել նաեւ ռուսական ավանդությանը պատկանող ժողովուրդների մասին: Սակայն նոր դարաշրջանը մեզ տանում է նոր փորձությունների միջով: Դրանք են հոգեւոր ուղենիշերի կորուստը, բարոյական ռելյատիվիզմը, նյութական բարեկեցության պաշտամունքը, տարբեր ժողովուրդների ազգային, մշակութային, կրոնական ինքնության գոյապահպանությանը սպառնացող վտանգը:

Բայց համաշխարհային քաղաքակրթությունը չի կարող գոյատեւել առանց հոգեւոր եւ բարոյական ուղենիշերի: Մեզ՝ հնագույն մշակութային ավանդույթներ կրողներիս համար արժեհամակարգը ձեւավորվել է շնորհիվ քրիստոնեական հավատքի: Այսօր մենք պետք է հոգ տանենք, որպեսզի այդ արժեքները չանհետանան մարդկային կյանքից:

Տերը թող օգնի բոլորիս այդ հարցում: Ամենողորմ Աստծո օրհնությունը թող միշտ լինի Հայաստանի եւ նրա քրիստոնյա ժողովրդի հետ:

* * *

Վերջում Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարքն Ամենայն Հայոց Կաթողիկոսին նվիրեց հայրապետական պանակ եւ լանջախաչ, իսկ տաճարին ընծայաբերեց Քրիստոսի սրբապատկեր: Ապա Նորին Սրբությունը վերստին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին եւ հայ ժողովրդին ջերմ ընդունելության համար:

Հայրապետական ուղերձներից հետո հնչեցին հայկական եւ ռուսական եկեղեցական շարականներ: Արարողությունը եզրափակվեց երկու հովվապետների «Պահպանիչ» աղոթքով:

Մարտի 18-ին Երեւանում Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Պատրիարք Նորին Սրբություն Կիրիլ Առաջինը կատարեց Ռուս Ուղղափառ Եկեղեցու հիմնարկեքի արարողությունը՝ աղոթակցությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի:

Արարողությանը ներկա էին Հայաստանում հավատարմագրված դեսպաններ, եկեղեցու բարերար, ռուսաստանաբնակ Արա Աբրահամյանը եւ բազմաթիվ հավատացյալներ:

«Այսօր մենք կատարեցինք Երեւանում նոր ուղղափառ եկեղեցու հիմնարկեքը, որտեղ կլինի նաեւ Հայաստանում Ռուս Ուղղափառ Եկեղեցու ներկայացուցչությունը: Սա նշանակալից իրադարձություն է, որին մենք բոլորս շատ ենք սպասել»,- արարողությունից հետո իր խոսքում նշեց Կիրիլ Պատրիարքը՝ մաղթելով, որ Եկեղեցին ուղղափառների նոր աղոթատուն լինելուց զատ դառնա նաեւ երկու եկեղեցիների եւ ժողովուրդների բարեկամության ու համագործակցության եւս մեկ հանգրվան:

Ապա ներկաներին իր օրհնության խոսքը փոխանցեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՌԻԹՈՎ

(18 մարտի 2010 թ.)

Ձե՛րդ Սրբություն, սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս,

Մեծարգո՛ պրն դեսպան,

Սիրելի՛ ներկաներ,

Այսօր կրկնակի ուրախությամբ ու ցնծությամբ է լցված Մեր հոգին: Հայոց օրհնյալ հողի վրա Ձեզ հետ՝ սիրեցյալ եղբայր, միասնական աղոթքներով կատարեցինք ռուսական եկեղեցու հիմնարկեքի արարողությունը: Գեղեցիկ այս վայրում վեր է խոյանալու մի նոր աղոթատեղի՝ իր օրհնաբաշխ ու շնորհաստփյուռ հարկի ներքո հավաքելով ոչ միայն ռուս, այլեւ ուկրաինացի, բելառուս, հույն եւ Ուղղափառ մյուս եկեղեցիների հավատացյալներին:

«..Քանի որ նախանձախնդիր էք հոգեւոր շնորհների, ջանացէ՛ք առաւել եւս հարստանալ նոյն շնորհներով ի շինութիւն եկեղեցու» (Ա Կորնթ. ԺԴ 12), -ասում է Պողոս Առաքյալը: Անհավասկ, սիրելինե՛ր, Հայաստանում բնակվող ռուս ուղղափառ զավակներից հոգեւոր շնորհների հանդեպ ունեցած նախանձախնդրության եւ ասրվածահաճո ընթացքի պտուղն է կառուցվող այս եկեղեցին, ինչպես որ Ռուսիո օրհնյալ հողի վրա կառուցվող Մոսկվայի հայկական եկեղեցին արդյունքն է հավատավոր մեր հայորդիների աստվածահաճո եւ ազնիվ ձգտումների:

«Երանի զեկեղեցի շինողաց». այս մաղթանքն են բազմիցս հնչեցրել Մեր նախնիք իրենց շուրթերից, երբ տեսել են նախաձեռնությունը այն հավատացելոց, որոնց շնորհիվ վեր են հառնել եկեղեցիներ: Երանի է մեր հավատավոր որդիներին, որ հավատքի իրենց ուղին զարդարում են եկեղեցաշինությամբ՝ արժանի դառնալով Երկնավոր մեր Տիրոջ օրհնությանն ու երկնառաք բյուր բարիքներին:

Քաղցր հիշողությամբ ենք մտաբերում այն օրը, երբ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո երջանկահիշատակ Ալեքսի Բ Պատրիարքի հետ կատարեցինք Մոսկվայում կառուցվող հայկական եկեղեցու հիմնարկեքի արարողությունը: Եւ այսօր կամոքն Աստուծո, ի Քրիստոս սիրեցյալ Մեր Եղբոր՝ Կիրիլլ Ա Պատրիարքի հետ միասնական աղոթքով կատարեցինք հիմնարկեքի արարողությունը Երեւանի Սուրբ Խաչ ռուսական եկեղեցու:

Հայոց եւ Ռուսիո սրբազան հողի վրա բարձրացող նվիրական մեր տաճարները խորհրդանշում են նաեւ մեր երկու ժողովուրդների եղբայրական գործակցության ոգով հաստկանշված դարավոր բարեկամությունը եւ գալիս են նոր ընթացք ու զարգացում բերելու մեր եկեղեցիների համագործակցությանը:

Ցնծացե՛ք եւ ուրախ եղեք, սերելի՛ ուղղափառ զավակներ մեր, քանզի Տերը շնորհ արեց ամենքիդ, եւ սրբազան ձեր տաճարի հիմերի օրհնությունը կատարվեց ձեռամբ ձեր Հովվապետի, որին աղոթակից եղանք եւ մենք՝ հայցելով Երկնավորից, որ Տերը երկար տարիների արդյունավոր գահակալություն պարգեւի

հոգեւոր մեր եղբորը եւ օրհնի ազնիվ ջանքերը Կիրիլ Պատրիարքի՝ հանուն Ռուս Ուղղափառ Եկեղեցու պայծառության եւ Ռուսաստանի Դաշնության առավել զորացման ու բարգավաճման:

Եկեղեցու հիմնարկեքի այս օրհնյալ առիթով Մեր բարձր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում եկեղեցու բարերար, Ռուսաստանում բնակվող մեր ժողովրդի արժանավոր զավակ Մեծարգո Տիար Արամ Աբրահամյանին, ինչպես նաեւ եկեղեցին նախագծող ճարտարապետին եւ կառուցող շինարարներին:

Տոնական այս օրը մեր պատգամն է ձեզ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, որ շարունակեք ձեր քրիստոնեական ընթացքը հայոց հողի վրա, միշտ արթուն պահեք ձեր հոգիներում եկեղեցասիրության ոգին, ինչպես նաեւ հաստատուն՝ ձեր քայլերը դեպի Աղբյուրության դռները ձեր առջեւ բացող Սուրբ Եկեղեցի, որը գորություն է պարգեւում դիմակայելու ժամանակների մարտահրավերները եւ հավատարիմ մնալու ձեր Եկեղեցու սրբազան արժեքներին ու ավանդույթներին:

Ձեր աղոթքներով խաղաղ եւ ապահով պիտի լինեն մեր երկրները, հզոր ու անսասան՝ մեր եկեղեցիները եւ ամուր ու հարատեւ՝ եղբայրությունը հայ եւ ռուս հավատակից ժողովուրդների:

Աղոթք ենք մատուցում առ Բարձրյալն Աստված, որպեսզի բազմապատկեք եկեղեցաշեն ու բարի ձեր իրագործումները եւ լինեք հավատավոր զավակները Ռուս Ուղղափառ Եկեղեցու եւ արժանավոր քաղաքացիները Հայաստանի Հանրապետության:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեանդ. Ամէն:

* * *

Եկեղեցու հիմնարկեքից հետո երկու հովվապետները այցելեցին Երեւանի պետական համալսարան, ուր հանդիպում ունեցան համալսարանի ղեկավարության, դասախոսական կազմի եւ ուսանողության հետ: Հանդիպման ընթացքում Կիրիլ Ա Պատրիարքին շնորհվեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում, ապա տեղի ունեցավ Պատրիարքի «Հովվի խոսք» եւ «Ազատություն եւ պատասխանատվություն» գրքերի հայերեն թարգմանությունների շնորհանդեսը:

Ներկաներն առիթ ունեցան լսելու Ռուսիո Պատրիարքի մտորումները քրիստոնեական արժեքների եւ մեր ժամանակներում դրանց դերակատարության, ինչպես նաեւ հասարակական խնդիրների մասին:

Մարտի 18-ին՝ Ռուսաց Պատրիարքի պաշտոնական այցի վերջին օրը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհարանի դահլիճում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարք Ն. Ս. Կիրիլ Առաջինը ստորագրեցին համատեղ հայտարարություն:

Արարողությանը ներկա էին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմական առաջնորդները, Մայր Աթոռի միաբանները, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամները եւ Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պատրիարքին ուղեկցող պատվիրակությունը:

ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՈՍԿՎԱՅԻ ԵՒ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԵՒ Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԻՋԵՒ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին,18 մարտի 2010 թ.)

Գոհություն ենք հայտնում մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսին, որ պարգեւել է մեզ շնորհը 2010 թ. մարտի 16-18-ը Մեծ պահքի օրերին, երբ ողջ քրիստոնյա աշխարհը պատրաստվում է Սուրբ Զատկի տոնին, հանդիպել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում:

Մենք խոնարհվեցինք մասունքների առջեւ առաքելապատիվ Սուրբ Գրիգոր Լուսավորչի՝ հովանավորի Հայ Առաքելական Եկեղեցու, ով պաշտելի է նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու սրբերի շարքում: Հարգեցինք հիշատակը 1827 թ. Էջմիածնի մատույցներում Հայ Եկեղեցու սրբությունները եւ քրիստոնեական հավատքը պաշտպանելիս զոհված ռուս զինվորների: Մենք աղոթքով հիշեցինք 1915–1923 թթ. Հայոց ցեղասպանության զոհերին:

Մենք այցելեցինք Երեւանի Սուրբ Տիրամոր ռուսական եկեղեցի: Կիրիլ Պատրիարքը եւ Ռուս Եկեղեցու պատվիրակության անդամները ներկա եղան գոհաբանական աղոթքին Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցում, որը կառուցվել է Հայաստանի քրիստոնեության մեծ դարձի 1700-ամյա հոբելյանի առիթով: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Կիրիլ Պատրիարքին հանձնեց Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու բարձրագույն պարգեւը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» շքանշան: Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ներկայությամբ Մոսկվայի եւ Համայն Ռուսիոյ Կիրիլ Պատրիարքը կատարեց Երեւանում կառուցվող Տիրոջ Կենսատու եւ Պատվական Սուրբ Խաչի Վերացման անունով ռուսական ուղղափառ եկեղեցու հիմնարկեքը: Երկու Եկեղեցիների Հայրապետներն այցելեցին Երեւանի սեպական համալսարան եւ իրենց օրհնությունը բաշխեցին ուսանողությանը, հանդիպմանը ներկա մտավորականությանը եւ Հայաստանի հասարակության ներկայացուցիչներին: Համալսարանում տեղի ունեցավ շնորհանդեսը Կիրիլ Պատրիարքի երկու գրքերի հայերեն թարգմանության՝ «Ազատություն եւ պատասխանատվություն, ներդաշնակության որոնումներ», «Հովվի խոսքը»: Երեւանի սեպական համալսարանը Կիրիլ Պատրիարքին շնորհեց ԵՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

Հայաստանի Հանրապետության Նախագահ տիար Սերժ Սարգսյանի հետ հանդիպման ժամանակ մենք անդրադարձանք Եկեղեցի եւ պետություն հարաբերությունների զարգացմանը Հայաստանում եւ Մոսկվայի Պատրիարքության հովանու ներքո գտնվող երկրներում, խոսեցինք հասարակական կյանքում մեր Եկեղեցիների ունեցած կարեւոր դերակատարության եւ տարածաշրջանում խաղաղություն հաստատելու գործում հոգեւոր սեփերի իրականացրած միջոցա-

«Հրաշափառի» արարողության ժամանակ

ռումների մասին եւ հետաքրքրությամբ լսեցինք Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ հաստատված եւ զարգացող դաշնակցային հարաբերությունների, ինչպես նաեւ Անկախ Պետությունների Համագործակցության երկրների միջեւ համագործակցության նոր ծրագրերի եւ դրանց զարգացման հեռանկարների մասին:

Փառք ենք մատուցում Բարձրյալն Աստծուն, որ օգնում է մեզ ամրապնդելու մեր եկեղեցիների կապերը եւ եղբայրական հարաբերությունները նրանց հովվապետների միջեւ: Գոհություն ենք հայտնում Աստծուն, որ մեր երկրներում ավելանում են համայնքները, նոր տաճարներ են վեր խոյանում, վերաբացվում են եւ բարեզարդվում վանքերն ու սրբատեղիները, բարեպաշտորեն պահպանվում են եկեղեցական սրբությունները, զարգանում են հարաբերությունները Եկեղեցու եւ պետության, Եկեղեցու եւ հասարակության միջեւ, մեծանում է թիվը Եկեղեցուն կից գործող երիտասարդական, կրթա-մշակութային, խնամատար եւ մարդասիրական կառույցների ու հաստատությունների:

Մենք մեծ նշանակություն ենք տալիս երկու եկեղեցիների պատրիարքական Աթոռներին կից գործող եկեղեցական ներկայացուցչությունների գործունեությանը, որոնք կոչված են օժանդակելու եկեղեցիների միջեւ հաղորդակցության զարգացմանը:

Ի դեմս Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմի առաջնորդի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ունի իր ներկայացուցիչը Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքի մոտ: Երեւանում նոր ռուսական Ուղղափառ եկեղեցու կառուցումը պայմաններ է ստեղծում, որ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Պատրիարքն իր ներկայացուցիչն ունենա Ամենայն Հայոց Կաթողիկոսի մոտ:

Մեր Եկեղեցիները շարունակելու են երկկողմ ասփվածաբանական քննարկումներն ու երկխոսությունները հովվական եւ ասփվածաբանական հարցերի շուրջ, համագործակցելու են երիտասարդների կրթության եւ քրիստոնեական դաստիարակության բնագավառում, միմյանց օգնելու են երիտասարդ հոգեւորականների պատրաստության գործում, ովքեր կարող կլինեն պատասխաններ տալ ժամանակակից կյանքի գերխնդիրներին:

Երկու եկեղեցիների համար համագործակցության կարեւոր ոլորտ է սոցիալական գործունեությունը. բանակի եւ քրեակատարողական հիմնարկներում հոգեւոր սպասավորությունը, գործունեությունը բարեսիրական եւ հիվանդախնամ հաստատություններում ու վերականգնողական կենտրոններում:

Համաշխարհայնացման պայմաններում մենք կոչ ենք անում մեր եկեղեցիների սպասավորներին գործադրել ջանքերը քրիստոնեական հավատքի եւ արժեքների տարածման գործում: Ի պատասխան ներկա աշխարհում տարածվող կրոնական նոր հոսանքների՝ անհրաժեշտ ենք համարում իրականացնել համատեղ միջոցառումներ եւ ծրագրեր՝ կանխարգելելու քայքայիչ աղանդների եւ կեղծ կրոնական կազմակերպությունների վնասակար գործունեությունը:

Հայ Առաքելական Եկեղեցու եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու համար կարեւոր

են միջքրիստոնեական եւ միջկրոնական հարաբերությունները: Միայն աշխարհի ավանդական բոլոր կրոնների ներկայացուցիչների համատեղ ջանքերով մենք կարող կլինենք պաշտպանել հավատքի կարեւորությունը մարդու հասարակական եւ անհատական կյանքում: Մենք հաստատում ենք մեր պատրաստակամությունը զարգացնելու ԱՊՀ եւ Մերձբալթյան երկրների միջկրոնական խորհրդի աշխատանքները, ինչպես նաեւ շարունակելու տարածաշրջանի հոգեւոր պետերի եռակողմ եւ քառակողմ հանդիպումները՝ հանուն խաղաղության եւ Կովկասի երկրների բարօր կյանքի: Պատրիարք Կիրիլ Ա իր եւ Կովկասի մուսուլմանների առաջնորդ Շեյխ ուլ Իսլամ Ալլահ Շյուքուր Փաշազադեի անունից հրավիրեց Գարեգին Բ Կաթողիկոսին՝ մասնակցելու Բաքվում 2010 թ. ապրիլի 26-27-ը կայանալիք կրոնական առաջնորդների գագաթաժողովին:

Մենք գոհություն ենք մատուցում Աստծուն երկու եկեղեցիների միջեւ առկա բարեկամության մեծ պարգեւի համար եւ աղոթում, որ այս բարեկամության պտուղները տեսանելի դառնան Եկեղեցիների անդամների կյանքում եւ վկայեն բոլորիս հանդեպ Աստծո անսահման սիրո մասին:

* * *

Մարտի 18-ին ավարտվեց Մոսկվայի եւ Համայն Ռուսիոց Կիրիլ Ա Պատրիարքի եռօրյա պաշտոնական այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Մայր Աթոռի ողջ միաբանության մասնակցությամբ եկեղեցական թափորը երկու Հայրապետներին Վեհարանից առաջնորդեց Մայր Տաճար, ուր տեղի ունեցավ հրաժեշտի արարողություն: Հավարտ արարողության, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը բարի ճանապարհ մաղթեց Ռուս Եկեղեցու հովվապետին եւ նրա ուղեկիցներին՝ նշելով, որ Հայ ժողովրդի եւ Հայոց Հովվապետի աղոթքները մշտապես պիտի ուղեկից լինեն նրանց:

Իր հերթին Կիրիլ Ա Պատրիարքն իր երախտագիտության խոսքը հայտնեց ջերմ ընդունելության համար՝ Բարձրյալից հայցելով օրհնություն հայ ժողովրդի, Հայաստանի Հանրապետության եւ Հայ Եկեղեցու համար: